

գոքրիկները՝ ապաստանած Mme. Doughty Wylieի (կին անգլ. հիւպատոսին) հաստատած հիւանդանոցին մէջ. այս աղքիւ կինը, առաւօտէն մինչեւ իրիկուն, հիւանդապահուհիի մը պէս զանոնք կը խնամէր, ամէն գովեալէ վեր յարգանքով մը և արիւթիւնով մը:

Յրանաացի և գերման քոյրերն ալ անոնցմէ կը խընամէին անջատօրէն:

Գերման հիւանդանոցի քոյր մը ղէպքերու պատմութիւնները ընելու ժամանակ, եկաւ վայրկեան մը՝ ուր անկարող եղաւ զայն շարունակել. յետոյ, իր յուզումը անցնելէ վերջ, մեզի ըսաւ որ Սրգարեան վարժարանին մէջ տեղաւորուած շարժելու անկարող 150 վիրաւորեալներ՝ չէնքին հրդեհումին ատեն ողջ ողջ այրուած էին: Ատիկա ամենէն կակժալի մանրամասնութիւններէն մէկն է:

Շատ մարդիկ ևս մանր գտած են բոցերուն մէջ:

Սակայն որովհետեւ անկարելի է ամէն ինչ դրել, պիտի գոհանամ թուելով տակաւին 17 անձերու պարագան, — որոնց երկուքը ամերիկեան միսիոնար և մէկը՝ բողոքական հովիւ, — անդէն, անպաշտպան և ոչ մէկ բանէ դանդատող, զորս այրած են Օսմանիէի հայ եկեղեցիին մէջ՝ եկեղեցական պաշտամունքի ժամանակ:

Համրտի վարչութեան օրով՝ կիներու և տղայոց կը խնայէին և չէին յարձակեր՝ ուրիշ ազգութեանց քրիստոնեաներուն, նոյնիսկ Հայ-Կաթողիկոսներուն և Հայ-Բողոքականներուն: Մինչդեռ Ստանայի քրիստոնեաներուն միջեւ ոչ մէկ խարութիւն դրած են: Սուրիացիները (Սուրիանի-Քատիմ) և Սուրիացի կաթողիկոսները (Սուրիանի-քաթոլիք), որ ըստ լեզուի և հանգամանքի հայերէն ոչինչ ունին, — վաճաղի արաբերէն կը խօսին — ունեցած են, առաջինները՝ 400 զոհ և երկրորդները՝ 65. Բազդէացիները (Քիլտանի) ունեցած են 200. Իսկ